

## ՊԱՏՄԱԿԱՆ

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### ԱՐՄԱՇԷՆ ԵՐՈՒՍԱԳԼԵՄ

**Երանաշնորհ Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս, Եղիշէ  
Դուրեան եւ Թորգոմ Գուշակեան Պատրիարքներ**

**(1921-1939)**

#### Նախորդող Շրջանը

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ամենաբեղուն շրջանը կարելի է համարել երկու տասնամեակ տեւող երջանիկ տարիները, երբ Արմաշի սերունդէն երեք կարկառուն հոգեւորականներ, ուսուցիչ և աշակերտ, Եղիշէ Դուրեան, Բաբգէն Կիւլէսէրեան և Թորգոմ Գուշակեան արքեպիսկոպոսները, որոնք փառաւորեցին Ս. Աթոռը՝ Արմաշէն Երուսաղէմ գալով ի հետեւանս հայոց դէմ կատարուած մեծ ոճիրին:

Նախապէս, Յարութիւն Վեհապետեան Պատրիարքի 25 տարիներուն (1885-1910) աչքառու կը դառնար Երուսաղէմի Պատրիարքութիւնը և ժառանգաւորաց Վարժարանը ուրկէ անցեր էին 250 աշակերտներ, որոնցմէ 35-ը կատարած էին իրենց ուխտը հոգեւորական դառնալու Երուսաղէմի, Սիսի, և Արմաշի մէջ: Վեհապետեան Պատրիարքի ձեռքով օծուած էին ակնառու բարձրաստիճան հոգեւորականներ որոնցմէ յետագային յայտնի դարձան՝ Պետրոս Կաթողիկոս Սարաճեան, Մեսրոպ Պատրիարք Նշանեան, Եպիսկոպոսներ՝ Վարդան Գասպարեան, Եղիշէ Զիլինկիրեան, Մատթէոս Գայրգճեան, Սմբատ Գազազեան և Գէորգ Վարդապետ Ճանսզեան:

Վեհապետեանի վախճանումէն ետք սակայն նոյն թափը չմնաց, և ինչպէս վանքին ընդհանուր կացութիւնը, նոյնպէս նաեւ ժառանգաւորաց Վարժարանը քայքայուեցան Համաշխարհային առաջին պատերազմի և Թուրքիոյ հայ եկեղեցական կեդրոններու նկատմամբ բռնադատիչ և քանդիչ միջամտութեանց հետեւանքով: Վանքն ու ժառանգաւորացը ինքզինքնին գտան միայն տասնամեակ մը ետք՝ նորընտիր Եղիշէ Դուրեան Պատրիարքի (1921-1930) և իր աշակերտին ու յաջորդին՝ Թորգոմ Պատրիարքի (1931-1939) շրջաններուն:

#### Արմաշէն Երուսաղէմ

Կիլիկիոյ Տ. Տ. Սահակ Բ. Կաթողիկոս 1916-ին Սիսէն արտաքսուելով բռնի որպէս Կաթողիկոս-Պատրիարք նշանակուելով թուրք պետութեան կողմէ Երուսաղէմ մեկնեցաւ, անշուշտ թրքատիպ տրամաբանութեամբ ու Հայ եկեղեցւոյ Կ.Պոլսոյ, Սիսի և Արմաշի կեդրոններու քայքայման ծրագրով: Իբրեւ Երուսաղէմի Պատրիարքութեան մեծաւորը Սահակ Կաթողիկոս Դպրանոց անունին տակ վերաբացաւ ժառանգաւորաց Վարժարանը ուր ինք ուսանած էր յիսնամեակ մը առաջ և ձեռնադրուած, վարելով Լուսարարապետի կարեւոր պաշտօնը: Այս անգամ լսարանական երկու բաժանմունքներով կը բացուէր հոգեւոր կրթարանը, «ուր աշակերտեցան ժառանգաւորաց վարժարանի նախկին 8 և Երուսաղէմ հասած Արմաշու Դպրեվանքի նախկին 13 սաները»: Սակայն այս բոլորը խաբուսիկ և կարճատեւ եղան ինչպէս եղաւ Սահակ Կաթողիկոսի կարճատեւ կեցութիւնը, երբ 1917 Ապրիլ 26-ին աշակերտներ զինուորագրուելով պարտաւորուեցան Դամասկոս մեկնիլ իրենց ուսուցչին և Արմաշի հիմնադիր վերա-

տեսուչ Մաղաքիա Օրմանեան նախկին Պատրիարքին հետ որպէս լիազօր Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Երուսաղէմ իր պաշտօնին վրայ կը մնար 1914-էն ի վեր: Դամասկոս ղրկուեցաւ նաեւ բոլորին մեծաւորը Տ. Տ. Սահակ Խապայեան Կաթողիկոս-Պատրիարքը միայն տարի ու կէս Երուսաղէմ մնալէ ետք:

### Զինադադարէն ետք

Ա. Պատերազմի զինադադարէն ետք, 1921 թուին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք ընտրուեցաւ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Կեդրոնական Ժողովին կողմէ, «վերջին անգամ ըլլալով», երբ արդէն Օսմանեան պետութիւնը հեռացած էր և Անգլիական հոգատարութիւնը հաստատուած էր Պաղեստինի վրայ: Դուրեան Պատրիարքի առաջին ձեռնարկը եղաւ հայ հոգեւորականներ պատրաստելու, «սուրբ վեթիմանդութիւնը», իր իսկ բառերով, ակնարկելով Արմաշի Դպրեվանքին մէջ իր շունչին տակ պատրաստուած այն սերունդին որ մեծագոյն մասամբ զոհ գնաց Թուրք պետութեան մեծ ոճիրին: Այնքան ճշմարիտ էր իր Պարտիզակէն սկսեալ հոգեհարազատ աշակերտին և իր յաջորդին Թորգոմ Պատրիարք Գուշակեանի բանիմաց բարիգալստեան խօսքը՝ «Լուսաւորեա՛ Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո»:

### Եղիշէ Պատրիարք Դուրեան (1921-1930)

Արմաշի Դպրեվանքին «հոգին» էր, ինչպէս հիմնադիր վերատեսուչ Մաղաքիա Պատրիարք Օրմանեան անոր «միտքն» էր: Այդ «հոգին» պիտի վերականգնէր Երուսաղէմը, ուրկէ պիտի հասնէին փաղանգ մը նոր հոգեւորականներ՝ փոխարինելու Արմաշականները: Իր Երուսաղէմ հասնելէն կարճ ժամանակ ետք, 1924 Նոյեմբերին, Պատրիարքին հրաւերով Արմաշի անդրանիկ շրջանաւարտ՝ Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան Ամերիկայէն Սուրբ Քաղաք կը հասնէր ստանձնելու Ժառանգաւորաց Վարժարանի ուսուցչապետի պաշտօնը: Փաստօրէն Արմաշ փոխադրուած էր Երուսաղէմ իր իմացական տարողութեամբ և կրթական ծրագրով, մանաւանդ երբ հոն Բաբգէն Սրբազան կարողացաւ իր հոգողութեամբ յետ մահու ի լոյս ընծայել իր հոգեւոր ծնողին և Արմաշու Դպրեվանքին հիմնադիր վերատեսուչ Օրմանեան Պատրիարքի «Ազգապատում» հատորներուն երրորդը:

### Առաջին Ձեռնադրութիւնները

Դուրեան Պատրիարք իր առաջին ձեռնադրութիւնը 1923 թուին կատարեց զոյգ մը հոգեւորականներու, Կիրեղ վարդապետ Իսրայէլեան Նոր Զուղայեցի, յետագային Կիրեղ Բ. Պատրիարք Երուսաղէմի, և Մամբրէ վարդապետ Գալֆայեան Զմիւռնիացի, յետագային Առաջնորդ Միացեալ Նահանգաց Ամերիկայի Արեւմտեան և Արեւելեան թեմերուն: Դուրեան Պատրիարքի առաջին շրջանի սակաւաթիւ աշակերտները ստուարացան Հալէպէն եկող աշակերտներով և որբանոցներէն Երուսաղէմ բերուած ուշիմ հայ պատանիներով: Պատրիարքը կատարեց նաեւ յաջորդ զոյգին ձեռնադրութիւնը 1928 Յունիս 22-ին, երկու Այնթապցի պատկառելի քահանայ հայրերու որդիներուն, զորս կոչեց Նորայր վարդապետ Պողարեան և Տիրան վարդապետ Ներսոյեան, ի ներկայութեան իրենց քահանայ հայրերուն Տ. Գարեգին Ա. Քհնյ. Պողարեանի և Տ. Ներսէս. Ա. Քհնյ. Թափուքճեանի: Առաջինը՝ Նորայր Արքեպիսկոպոս եղաւ մեծ ձեռագրագէտ և մատենագէտ, և երկրորդը Տիրան Արքեպիսկոպոս՝ յայտնի աստուածաբան և Առաջնորդ Ամերիկահայ թեմին: Նորայր և Տիրան վարդապետներ իսկոյն Անգլիա ուղեւորեցան Դուրեան Պատրիարքի տնօրինութեամբ ուսանելու Միրֆիլտի College of the Resurrection-ի մէջ:

Ուսման ծրագիրը բաժնուեցաւ Պատրիարքին և Բաբգէն Եպիսկոպոսին միջեւ, Պատրիարքը ինք ստանձնելով կրօնական և պատմագիտական ճիւղերու դասաւանդումը «դասաւանդի վերածելով պատրիարքական դահլիճներէն մին»: Իբրեւ գլխաւոր դասախօս Բաբգէն Սրբազան դասաւանդեց գրաբար, աշխարհաբար, Ս. Գրոց Նե-

րաժուլիւն, Պատմութիւն Հայ Եկեղեցւոյ, Հին Կտակարան, մատենագրութիւն, կանոնագիտութիւն և տոմարագիտութիւն: Մինչեւ 1930 երկու մեծանուն հոգեւորականներուն աշակերտեցան հինգ դասարաններու ուսանողները, որոնցմէ որակաւոր աւարտականներ մինչեւ մօտաւոր անցեալին, մեր օրերուն, կը գլխաւորէին Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն պաշտօնները՝ պատրիարքներ և թեմակալ առաջնորդներ:

### Յաջորդ Սերունդը

Եղիշէ Պատրիարք Դուրեան գահակալեց միայնութիւն և կէս տարիներ, հասցնելով իր Երուսաղէմի ձեռնադրութեանց երախայրիքը յաւելեալ ինը հոգեւորականներով զորս ձեռնադրել չհասաւ իր վաղաժամ վախճանումով 1930 թուին: Նոյն թուականի Յունիս 22-ին, Պատրիարք Հօր պատրաստած սերունդը իսկոյն ձեռնադրուեցաւ Տեղապահ Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեանէ, Բաբգէն Եպիսկոպոսի յանձնարարութեամբ անոնցմէ վեցը գրելէ ետք իրենց աւարտաճառերը հետեւեալ նիւթերը ուսումնասիրելով:

«Մովսէս Խորենացիի Պատմութեան Ա. Գիրքը», Օձնեցիի՝ «Ընդդէմ Երեսուքականաց ճառը», Եղիշէի «Բ. Յեղանակը», Ներսէս Շնորհալոյ «Ողբ Եդեսիոյ» գիրքը, «Թուրք Ղազար Փարպեցւոյ առ Վահան», Եզնիկ Կողբացիի «Ընդդէմ Մարկիոնի» գիրքը: Բոլորն ալ յետագային եպիսկոպոս ձեռնադրուեցան, և ոմանք թեմակալ առաջնորդներ՝ Հայկազուն Արքեպս. Աբրահամեան՝ Նախանդամ Գշի-ի, Սիոն Արքեպս. Մանուկեան՝ Հարաւային և Հիւսիսային Ամերիկայի, Սերովբէ Արքեպս. Մանուկեան՝ Փարիզի և Արեւմտեան Եւրոպայի, Զգօն Եպս. Տէր Յակոբեան, Հովիւ Միլանոյի և Առաջնորդ Իրաքահայ թեմին, Շաւարշ Եպս. Գուլումճեան՝ Դամասկոսի, Պարգեւ Եպս. Վրթանէսեան՝ Երուսաղէմի: Միւս երեքը կոչուեցան Տէր Դաւիթ, Տէր Դեղամ և Տէր Զենոբ:

Վերելի ինը կը կազմէին Պատրիկ Կիւլպէնկեան Ընծայարանի սաները՝ բարերարի կրթաթոշակին անունով, բոլորն ալ աշխարհաւեր Առաջին Պատերազմի որբերէն որոնք ձեռնադրութիւն ստացան Տեղապահ Սրբազանի ձեռամբ ի ներկայութեան իրենց ուսուցչապետին Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանի, որ նաեւ քարոզեց իր աշակերտներու նուիրաբերման այդ բացառիկ առիթով: Ձեռնադրութեանց խարտաւիլակն էր Կիւրեղ Վարդապետ Իսրայէլեան, յետագային Կիւրեղ Բ. Պատրիարք Երուսաղէմի:

Սերունդ մը եւս հասցուց Երանաշնորհ Դուրեան Պատրիարքը որոնց ձեռնադրութիւնը կատարեց իր անմիջական յաջորդը Արմաշի ամենէն ընտիր սաներէն Թորգոմ Պատրիարք Դուշակեան, զանոնք վերակոչելով Եղիշէ Աբեղայ Տէրտէրեան յետագային Պատրիարք Երուսաղէմի, Հայրիկ Աբեղայ Ասլանեան՝ յետագային Լուսարարապետ Ս. Աթոռոյ, Ասողիկ Աբեղայ Ղազարեան՝ յետագային Առաջնորդ Իրաքի թեմին, և Տիրայր Աբեղայ Տէրվիշեան՝ յետագային հոգեւոր հովիւ Լոս Անճելըսի համայնքին, որոնք սարկաւագ ձեռնադրուած էին Դուրեան Պատրիարքի ձեռամբ:

### Թորգոմ Պատրիարք Գուշակեան (1931-1939)

Աշակերտը յաջորդելով իր ուսուցչին գերազանցեց կրօնականներ հասցնելով ու գրական և ուսումնական մակարդակը բարձրացնելով, հակառակ անոր որ ուսուցչապետ՝ Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան տարի մը առաջ որպէս Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ մեկնած էր Անթիլիաս: «Արոմ» ամսագիրը հասաւ իր գագաթին ուր Թորգոմ Պատրիարք որպէս խմբագիրը լուսաւորեց ամէն մի թիւ իր գրական բարձր տաղանդին շնորհիւ: Ուսումնական ծրագիրը վերամշակելով հասցուց վեց սերունդներ, առաջին չորսը, որոնց ակնարկեցի արդէն, և յաջորդող սերունդներ, ընդհանուրը 23 հոգեւորականներ, որոնցմէ վեցը թողուցին իրենց հոգեւորականի կոչումը:

Ձեռնադրեալներուն կարեւոր մասը ապագային դարձան գիտակից առաջնորդները սփիւռքահայ թեմերուն: Նախ զոյգ մը՝ զորս կոչեց Պսակ Թումայեան և Միւռոն Կրճիկեան վարդապետներ (1934), և ապա զոյգ մը եւս՝ Շնորհք Պատրիարք Դալուստեան և Արթուն Հատիտեան (1935): Անոնց յաջորդեցին Հմայեակ Եպիսկոպոս

Գալուստեան և Արթուն Հատիտեան (1935): Անոնց յաջորդեցին Հմայեակ Եպիսկոպոս Ինդոյեան և Ոսկի Ստեփանեան վարդապետը (1936): Ապա 1938-ին զոյգ մը եւս՝ Հայկասէր Տօնիկեան և Կորին Մանուէլեան վարդապետները: Երանաշնորհ Պատրիարքը հասցուց նաեւ յաւելեալ եօթ աւարտականներ, երբ պատրաստ էին իր ձեռքով ստանալու քահանայական կարգը և սակայն յանկարծամահ կ'ըլլար երկու ամիս առաջ: 1939 թուին նորընտիր Մեսրոպ Նշանեան Պատրիարքի ձեռամբ կը ձեռնադրուէին Կոմիտաս Սիրունեան, Բաբգէն Արքեպս. Ապատեան, Յակոբ Արքեպս. Վարդանեան և Թորգոմ Պատրիարք Մանուկեան: Անոնցմէ մին Մեսրոպ Սէմէրճեան Ծ. Վարդապետ կը ձեռնադրուէր Նիւ Եորքի մէջ:

Թորգոմ Պատրիարք Գուշակեան իր մաքուր և օրինակելի կենցաղով, մտքի բարձրութեամբ և պատկառանքով, գրչի բեղուն և ոսկեղենիկ լեզուի բիւրեղեայարդիւնքով կրցաւ շնորհալի ուղիով և առանց պարտադրանքի հայրական ուղղութիւն տալ իր սաներուն, վանքն անուանելով «ՏՈՒՆ»՝ կարգապահ և վստահելի միաբաններով:

